ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ. Նախիջևանի վիմագրական ժառանգությունը. *հ. Դ,* Երնջակ գավառ, *Երևան, «Գասպրինտ», 2008, 308 էջ + 88 էջ ներդիր, հ. Ե,* Նախճավան, Շարուր գավառներ, *Երևան, «Գասպրինտ», 2009, 128 էջ + 56 էջ ներդիր, հ. Զ,* Ճահուկ - Շահապոնք գավառ, *Երևան, «Գասպրինտ», 2010, 120 էջ+ 108 էջ ներդիր:*

Սկզբից ևեթ ասենք, որ հայոց արվեստի պատմաբան ու տեսաբան Արգամ Այվազյանի գրախոսվող սույն աշխատանքը հավակնում է ՀՀ նախագահի 2010թ. մրցանակին հումանիտար գիտությունների գծով, ուստի մեր խոսքը կառուցել ենք դրան ներկայացվող պահանջներին համահունչ:

Մեր ժողովրդի պատմության քառուղիներում միշտ էլ եղել են ի վերուստ ընտրյալ անձինք, ովքեր իրենց ազգօգուտ գործունեությամբ լուսավոր հետք են թողել պատմության և մշակույթի անդաստանում: Այդ գործիչների անունները բոլորիս քաջ հայտնի են:

Ա. Այվազյանի շուրջ կեսդարյա գործունեությունը կապվում է Հայաստանի Նախիջևան երկրամասի պատմական և մշակութային ժառանգության ուսումնասիրության հետ: Փաստորեն, նրա աշխատությունները եկան ամբողջացնելու և հարստացնելու Նախիջևանի վերաբերյալ XIX դ. մեր մեծերի՝ Ղևոնդ Ալիշանի ու Արիստակես Սեդրակյանի, Մեսրոպ Սմբատյանի ու Սմբատ Տեր-Ավետիսյանի, Երվանդ Լալայանի կատարած աշխատանքները: Մի գործ, որը եթե Ա. Այվազյանը այսքան տևական ժամանակ չաներ, ապա այսօր մեր պատկերացումներն այդ մասին թերի կլինեին, որովհետև հայոց այդ հինավուրց աշխարհի հուշարձանների գերակշիռ մասը մեր ոխերիմ հարևանների կողմից հիմնահատակ ավերվել է: Ահա այս կտրվածքով էլ՝Նախիջևան ասելով՝ մեծապես հասկանում ենք Արգամ Այվազյան և հակառակը: Ասվածը սոսկ հավուր պատշաճի խոսք չէ, որովհետև նրա գիտական գործունեության բուն ոլորտն ընդգրկում է Նախիջևանի տարածքի պատմության ու մշակույթի, ճարտարապետության ու քանդակագործության, կոթողային հուշարձանների ու վիմագրության, որմնանկարչական արվեստի ու ազգագրության, պատմության և հայագիտության այլևայլ բնագավառները:

Ա. Այվազյանը հայագետ-նախիջևանագետ է՝ պատմաբան, մատենագետ, մշակութաբան, վիմագրագետ, լրագրող, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ: Երկար տարիներ աշխատել և պաշտոնավարել է Հայաստանի գրահրատարակչական ոլորտում, հանրապետության հուշարձանների պահպանության վարչությունում, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի, հնագիտության և ազգագրության ինստիտուտներում: 2007 թվականի որպես փոխտնօրեն ղեկավարում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության» գիտական աշխատանքները:

Ա. Այվազյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների, որոնցից 26-ը լույս են տեսել առանձին գրքերով (մի մասը նաև անգլերեն և ռուսերեն լեզուներով): Գիտական զեկուցումներով մասնակցել է միջազգային բազմաթիվ գիտաժողովների: Հայաստանի և Նախիջևանի պատմամշակութային ժառանգության վերաբերյալ բանախոսություններով հանդես է եկել Հունաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Իրանում, Ռուսաստանում, Բուլղարիայում Թեքեյան մշակութային մրցանակաբաշխության 2006թ. մրցանա-

կակիր է: Ա. Այվազյանի «Նախիջևանի պատմամշակութային հուշարձանների հեղինակային փաստավավերագրական լուսանկարների ցուցահանդեսը» և «Խզված մեղեդի՝ Ջուղա»փաստավավերագրական, գիտահրապարակախոսական տեսաֆիլմը ցուցադրվել են Հայաստանում (Երևան՝ 2002, 2003, 2006), Իրանի Իսլամական Հանրապետությունում (Թեհրան, Սպահան՝ 2004), Ռուսաստանի Դաշնությունում (Մոսկվա՝ 2006), ԱՄՆ-ում (Հարվարդի համալսարան, Լոս Անջելես՝ 2007), Հունաստանում (Աթենք, Թեսալոնիկ՝2005, 2006): Այդ երկրների հայկական համայնքների համար Հայաստանի ու Նախիջևանի պատմության և մշակույթի վերաբերյալ հանդես է եկել մի շարք բանախոսություններով: Իրավամբ, Նախիջևան աշխարհի պատմական գավառների նյութական ժառանգության, մշակույթի ու արվեստի, որմնանկարչության ու վիմագրության և այլ բնագավառներում Ա. Այվազյանի կատարած աշխատանքը մեծ ավանդ է հայագիտության բնագավառում:

Հանրապետության նախագահի մրցանակին ներկայացված «Նախիջևանի վիմագրական ժառանգությունը» շարքի 6 հատորներից վերջին 3-ը (Դ, Ե, Զ) գիտական բարձր մակարդակով գրված աշխատություններ են: Դրանցում ներկայացված են Երնջակ, Նախճավան, Շարուր, Ճահուկ-Շահապոնք գավառների բնակավայրերի նախապատմական, հեթանոսական կամ հետագա ժամանակներից հարատևող պատմությունը՝ վկայություններով, նշանակալի իրադարձություններով, տեղանքով, ճակատագրով, ճարտարապետական հուշարձաններով, ամենատարբեր տիպի հուշարձանների նկարագրությամբ, տարբեր ժամանակների ու բնույթի աղբյուրներից քաղված տվյալներով: Բնութագրվում է ճարտարապետական կառույցների, տապանաքարերի, խաչքարերի, որմնաքանդակ-որմնանկարների, վիմագրերի արվեստը՝ հաճախ ընդհանրություններով ու տարբերություններով միմյանց ու պատմական Հայաստանի այլ վայրերի հուշարձանների համեմատությամբ: Խնդրո առարկա ուսումնասիրություններում ընդգրկված և աղբյուրագիտական մեծ ու բացառիկ արժեք ունեցող ողջ նյութը՝ փաստավավերագրական բազում լուսանկարներ, գծագրեր ու չափագրություններ, համարյա ամբողջությամբ գիտական աշխարհին ուրվթերցող հանրությանը ներկայացվում է առաջին անգամ: Պատմաճարտարապետական հուշարձաններ, որոնք այսօր այլևս չկան: Հասկանալի է, որ այդ աշխատությունները միակ վավերագրական ապացույցներն են Նախիջևանում մեր նախնիների ստեղծած ժառանգությունից:

Անշուշտ, անհնար է մեկ առ մեկ անդրադառնալ բոլոր հուշարձաններին, թեկուզև դրանց մի մասին, ուստի ստորև հակիրճ ներկայացնենք Ա. Այվազյանի այդ աշխատանքների բովանդակությունը:

«Նախիջևանի վիմագրական ժառանգության» Դ հատորում հանգամանորեն ներկայացվում է պատմական Հայաստանի Երնջակ գավառի 31 բնակավայրի պատմական անցյալը, պատմաճարտարապետական հուշարձանները և վիմագրական ժառանգությունը: Հետազոտությունը ներառում և գիտական շրջանառության մեջ է դնում բնակավայրերի հուշարձանների որմերի, գերեզմանատների տապանաքարերի, խաչքարերի և այլ հուշարձանների վրա քանդակված ավելի քան 850 վիմագիր, որոնցից մոտ 600-ը հրատարակվում է առաջին անգամ: Առդիր հրատարակվում են նաև վիմագրերի լուսանկարներ ու գրչանկարներ, հուշարձանների հատակագծեր և փաստավավերագրական այլևայլ լուսանկարներ, որոնց ընդհանուր թիվը հասնում է 1000-ի:

Շարքի Ե հատորում մանրամասն ներկայացվում է պատմական Հայաստանի Նախճավան և Շարուր գավառների 40 բնակավայրերի պատմական անցյալը, պատմաճարտարապետական հուշարձանները և վիմագրական ժառանգությունը՝ 345 վիմագիր, որոնցից 274-ը հրատարակվում է առաջին անգամ: Վիմագրերի վերծանություններին կից առաջին անգամ հրատարակվում են նաև դրանց գրչանկարները, լուսանկարները, հուշարձանների հատակագծերը, որոնց ընդհանուր քանակն անցնում է 560-ից:

«Նախիջևանի վիմագրական ժառանգության» Զ հատորում ներկայացված է պատմական Հայաստանի Ճահուկ - Շահապոնք գավառի 41 բնակավայրի պատմական անցյալը, պատմաճարտարապետական հուշարձանները և վիմագրական ժառանգությունը: Աշխատությունը ներառում և գիտական շրջանառության մեջ է դնում 296 վիմագիր, որոնցից 239-ը հրատարակվում է առաջին անգամ: Վիմագրերի վերծանություններին առդիր առաջին անգամ հրատարակվում են նաև դրանց գրչագրերն ու լուսանկարները, հուշարձանների հատակագծերն ու գունավոր, սև ու սպիտակ լուսանկարները, որոնց ընդհանուր քանակն անցնում է 790-ից: Այս ուսումնասիրությունը «Նախիջևանի վիմագրական ժառանգությունը» մատենաշարի վերջին հատորն է:

Ի դեպ, նկատենք, մատենաշարն ընդգրկում է Նախիջևանի տարածքի IX–XIX դդ. հայկական ողջ վիմագրական ժառանգությունը՝ ավելի քան 4000 վիմագիր (թեպետ հեղինակի կողմից արձանագրվել է 5850-ը), որոնք երկրամասի ու նրա բնակչության էթնիկական կազմի և հայկականության վերաբերյալ պատմական ու գրավոր վկայախոսության անհերքելի փաստեր են: Սրանից բացի Նախիջևանի տարածքում հայտնաբերվել ու Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի կողմից 2001 թ. հրատարակվել է այլալեզու՝ արաբերեն ու պարսկերեն 289 վիմագիր, որոնցից 25-ը սելջուկյան շրջանի (XIII–XIV դարերի), մնացյալը՝ XVIII–XIX դարերի:

Մրցանակի ներկայացված Ա. Այվազյանի այս աշխատությունները և առհասարակ նրա հետազոտությունները 80–90%-ով հայագիտության համար նորություններ են: Դրանք, որպես կարևոր սկզբնաղբյուրներ, օգտագործվում են հայ և օտար գիտնականների գիտահետազոտական աշխատանքներում: Այդ աշխատություններում ներառված գիտական ու փաստավավերագրական հարուստ նյութերը աղբյուրագիտական բացառիկ նշանակություն ունեն, մանավանդ որ ուսումնասիրությունների առարկա դարձած այդ բազմահազար հուշարձանները, կրկնենք, Նախիջևանի իշխանությունների կողմից հիմնահատակ ավերվեցին 1998–2006 թվականներին: Այնպես որ, այդ ուսումնասիրությունները հայագիտության մեջ մնալու են որպես փաստավավերագրական անանց արժեք ունեցող միակ աղբյուրներ: Պարզապես զարմանալ կարելի է՝ ինչպիսի նվիրումով, եռանդով ու աշխատասիրությամբ է հեղինակը կարողացել միայնակ ի մի բերել այդքան ծավալուն և տարողունակ նյութը:

Հայտնի իրողություն է, որ Նախիջևան աշխարհում դարերով իրար են հաջորդել աշխատասիրությամբ, գործիմացությամբ, քաղաքակիրթ վարք ու բարքով հռչակված սերունդներ, որոնց շառավիղներից է Ա. Այվազյանը: Հայագետ-նախիջևանագետի կատարած գիտական խիզախումն արժանացել է հայ և օտար անվանի բազմաթիվ գիտնականների, պետական-հասարակական գործիչների ուշադրությանն ու գնահատանքին: Այսպես, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը գրել է. «Երևի Հայաստանի ոչ մի պատմական շրջանը այնպիսի հարուստ գրականություն չունի, ինչպիսին Նախիջևանը: Դրա համար մենք պարտական ենք մեծ հայորդի, հայրենասեր Արզամ Այվազյանին: Այն, ինչ կատարել է Ա. Այվազյանը, կատարյալ սխրանք է: Նրա կատարածը մի ամբողջ գիտահետազոտական ինստիտուտի աշխատանք է, բայց կատարել է միայն ինքը...»: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանն էլ նկատել է. « Մասնագետներն ու ընթերցող հասարակայնությունը Ա. Այվազյանին են պարտական Նախիջևանի տարածքում կանգուն հայկական բերդերի, եկեղեցիների, խաչքարերի, գրչության կենտրոնների հետազոտման և նյութերի հրապարակման համար: Սկզբում գիտական ամսագրերում առանձին հոդվածներով, ապա գրքերով Ա. Այվազյանը մեզ ծանոթացրեց հայ արվեստի, ճարտարապետության մի ինքնատիպ ու խիստ հետաքրքրական դպրոցի նվաճումներին՝ փաստորեն վերացնելով մեր մշակույթի պատմության մեջ մի «սպիտակ բիծ»:

Ըստ այդմ, կարելի է արձանագրել, որ Ա. Այվազյանը մեր միջնադարյան գրիչների հայտնի՝ «Ձեռս գնայ, դառնայ ի հող,

Գիրս մնայ յիշատակող», պատգամի արժանավոր ժառանգորդն է:

Մեր խորին համոզմամբ՝ ՀՀ նախագահի մրցանակի արժանացող աշխատանքը ոչ միայն կոնկրետ տվյալ ժամանակահատվածում հեղինակի կատարած գործի արժևորումն է, այլև մեծապես տվյալ անձի ողջ գործունեությանը տրվող գնահատական է: Որքան հայտնի է, առայսօր հենց այս կտրվածքով է առաջնորդվել հեղինակավոր

այն հանձնաժողովը, որին վերապահված է այդ գործառույթը: Լիահույս ենք, որ ավանդույթը կշարունակվի նաև Արգամ Այվազյանի՝ պատանեկան հասակից ձեռնարկած ազգօգուտ այս մեծ գործը գնահատելիս, քանզի արվածը գիտականից բացի, նաև խիստ արդիական ու քաղաքական նշանակություն ունի՝:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

---

* *Նյութի տպագրության ընթացքում հայտնի դարձավ, որ Ա. Այվազյանի աշխատության ներկայացված հատորներն արժանացել են ՀՀ նախագահի 2010 թ. մրցանակին, որի համար նրան սրտանց շնորհավորում ենք (*Ան. Զ.*):*